



0084, Հայաստանի Հանրապետություն,  
քաղաք Երևան, Զ. Անդրանիկի 1,  
Հեռ. 060-38-00-01

0084, Z. Andranik st.1, Yerevan, Republic of Armenia  
Tel: 060-38-00-01

МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ  
И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ЗАО “ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ”  
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084, Республика Армения, город Ереван, ул.3. Андраника 1  
Тел: 060-38-00-01, E-mail: [hven@hven.am](mailto:hven@hven.am), [www.hven.am](http://www.hven.am)

No. 37-2  
« 30 » 03 2021թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ԵՎ «ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ  
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ «ԲԱՐՁՐԱՎՈՒՆ  
ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի № 03-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածների պահանջներով, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» և «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրերով (այսուհետ՝ Ծրագրեր) նախատեսված գնումների գործընթացն իրականացնելու նպատակով՝


ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով՝

- |                    |  |
|--------------------|--|
| Հայկ Հարությունյան | - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գլխավոր տնօրեն (Հանձնաժողովի նախագահ) |
| Դավիթ Գրիգորյան    | - Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ  |

- Հրայր Հարությունյան - Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարկային և դրամաշնորհային ծրագրերի վարչության վարկային և դրամաշնորհային ծրագրերի բաժնի պետ (համաձայնությամբ)
- Սիմոն Իգիտբաշյան - Ընկերության գլխավոր ճարտարագետի տեղակալ
- Արսեն Գաբրիելյան - Ընկերության գլխավոր ճարտարագետի տեղակալ
- Հակոբ Գրիգորյան - Ընկերության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի ծրագրի ղեկավար
- Գևորգ Մուրադյան - Ընկերության հաշվապահական հաշվառման բաժնի պետ -գլխավոր հաշվապահ
- Լիլիթ Մանուկյան - Ընկերության քարտուղարության պետ, ֆինանսական բաժնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող
- Մարգարիտա Ղազարյան - Ընկերության իրավախորհրդատու
- Տիգրան Սահրադյան - Ընկերության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Ընկերության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի առաջատար մասնագետ Նաիրա Հովհաննիսյանին:
3. Հաստատել Հանձնաժողովի գործունեության կարգը (այսուհետ՝ Կարգ)՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնաժողովին՝ իրականացնել Ծրագրերով նախատեսված գնումների շրջանակներում ստացված հայտերի գնահատումը՝ Ծրագրի իրականացման նպատակով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ կնքված փաստաթղթերով (վարկային և ծրագրային համաձայնագրեր, ֆինանսական համաձայնագրեր և այլն), ՀՀ օրենսդրությամբ, մրցութային փաստաթղթերի փաթեթներով, ինչպես նաև Կարգով նախատեսված ընթացակարգերին և պահանջներին համապատասխան:
5. Հանձնաժողովի առաջին նիստը գումարել 2021 թվականի մարտի 31-ին՝ հայկական ժամանակով ժամը 12:00-ին, Ընկերության գլխավոր գրասենյակում (ք.Երևան, Զ.Անդրանիկի 1 հասցեում):
6. Ուժը կորցրած ճանաչել Ընկերության գլխավոր տնօրենի 2014 թվականի հունվարի 20-ի № 03-Լ հրամանը:
7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Ընկերության գլխավոր տնօրենին:
8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ